ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3 (45)

2021 թ. նոյեմբերի 17-ին տեղի ունեցավ «Պատմաբանասիրական հանդես»-ի խմբագրական խորհրդի նիստ՝ հարցման ընթացակարգով:

Խմբագրական խորհրդի անդամներին ուղարկվեցին հետևյալ բովանդակությամբ գրություններ.

«Հարգելի պարոն/տիկին ...

«Պատմաբանասիրական հանդես»-ի 2021 թ. № 3-ի բովանդակության հաստատմանը նվիրված խմբագրական խորհրդի նիստն անցկացնում ենք հարցման ընթացակարգով:

Խնդրում ենք գրավոր կամ բանավոր հայտնել Ձեր կարծիքը:

Կից՝ 3 թերթ»:

Հարցմանը գրավոր արձագանքեցին՝ Ա. Մելքոնյանը, Ա. Դոլուխանյանը, Հ. Լ. Ձեքիյանը, Լ. Աբրահամյանը, Ս. Մուրադյանը, Վ. Տեր-Ղևոնդյանը, Հ. Հովհաննիսյանը, Պ. Ավետիսյանը, Գ. Բարդակչյանը, Վ. Կատվալյանը, Ա. Տերյանը և Ա. Տոնապետյանը:

Հարցմանը մասնակցած խմբագրական խորհրդի անդամները հիմնականում դրական կարծիք հայտնեցին ներկայացված նյութերի առնչությամբ: Հ. Լ. Ձեքիյանը որոշ վերապահություն էր հայտնել Լ. Սահակյանի «Դիտարկումներ Կոմիտաս Վարդապետ և Հայ Առաքելական եկեղեցի առնչությունների շուրջ» հոդվածի վերաբերյալ: Նյութին ծանոթանալուց հետո դա փարատվեց: Գ. Բարդակչյանն էլ ցանկություն էր հայտնել հետայսու ծանոթանալ հոդվածների անգլերեն ամփոփումներին:

Որոշվեց հաստատել հանդեսի 2021 թ. № 3-ի բովանդակությունը:

Գլխավոր խմբագիր,
բանասիրական գիտությունների
դոկտոր Ա. Զաքարյան